25/11/2019 թ
Ժամը 11:00 թիվ՝ 4

<<Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն>> ՓԲԸ
ք. Երևան Ֆանարջյան փ. 76 շ.

Արձանագրություն

ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/43 ծածկագրով գնման ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

գնահատող հանձնաժողովի նախագահ
/փոխտնօրեն/ Ա. Ջիլավյան
հանձնաժողովի անդամներ
/ինժեներական խմբի ղեկավար/ Պ. Նադիրյան
/գլխավոր հաշվապահ/ Շ. Անանյան
/անվտանգության ինժեներ/ Ս. Հայրապետյան
/հաշվապահ/ Ն. Դավթյան
Հանձնաժողովիքարտուղար՝
/գնումների համակարգող/ Արմեն Խաչատրյան

ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի /այսուհետև՝ Կարգ/ 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, գնահատող հանձնաժողովի նիստը համարվում է իրավազոր և հայտարարվում է բացված

Հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

Հանձնաժողովի նիստը նախագահող անձ Ա. Ջիլավյան

1. Ընդունել ի գիտություն որ՝

1.1 Կարգի 43-րդ կետի և գնման ընթացակարգի հրավերի 1–ին մասի 7.13-րդ կետի պահանջներին համապատասխան ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե /այսուհետ՝ Կոմիտե/ կատարվել է հարցում առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Ընդունել որոշում կողմ **5 *(հինգ)***, դեմ ***0 (զրո)*** ձայներով

2. Առաջին տեղը զբաղեցրած Մասնակիցների մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների համապատասխանության գնահատման մասին

2.1 Հիմք ընդունելով Կարգի 48-րդ և 59-րդ կետերի դրույթները և հրավերով սահմանված որակավորման պահանջների առկայությունը հիմնավորելու նպատակով Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի վերաբերյալ հանձնաժողովի անդամների տրված գնահատման թերթիկները (կցվում են). գնահատող հանձնաժողովը որոշեց

- «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ի մասնակցության իրավունքի և որակավորման պահանջները գնահատել բավարար:
- «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի մասնակցության իրավունքի և որակավորման պահանջները գնահատել բավարար:
- «ՕԱԶԻՍ ԿՈՄՊՅՈՒՏԵՐ» ՍՊԸ-ի մասնակցության իրավունքի և որակավորման պահանջները գնահատել բավարար:
- «Ինո-Թեքնոլոջի» ՍՊԸ-ի մասնակցության իրավունքի և որակավորման պահանջները գնահատել բավարար:
- «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ի մասնակցության իրավունքի և որակավորման պահանջները գնահատել բավարար:
- ԱՁ «Արա Կարապետյան»-ի մասնակցության իրավունքի և որակավորման պահանջները գնահատել բավարար:

▪ «ԱՅ ԹԻ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ-ի մասնակցության իրավունքի և որակավորման պահանջները գնահատել բավարար:

▪ «Էմ Սի Էս Կովկաս» ՍՊԸ-ի մասնակցության իրավունքի և որակավորման պահանջները գնահատել բավարար:

▪ «Սիկնիտ» ՍՊԸ-ի մասնակցության իրավունքի և որակավորման պահանջները գնահատել բավարար:

Ընդունել որոշում կողմ **5** ***(հինգ),*** դեմ ***0 (զրո)*** ձայներով

3. Մերժված հայտերի և չկայացած չափաբաժնիմմերի մասին

3.1 <<ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ>> ՍՊԸ-ն իր 15.11.2019թ-ին ուղարկած գրությամբ հայտնել է, որ, <<ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ>> ՍՊԸ-ն «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/43» գնման ընթացակարգի շրջանակներում <<ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ>> ՍՊԸ-ի կողմից 7-րդ չափաբաժնի մասով սխալմամբ ներկայացրել է ապրանքի մեկ միավորի գինը: Եվ խնդրել է մերժել տվյալ չափաբաժնի գնման հայտը:

3.2 Հաշվի առնելով <<ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ>> ՍՊԸ-ի վերը նշված գրությունը և ներկայացրած գնային առաջարկը գնահատող հանձնաժողովը արձանագրեց հետևյալը՝

համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի. <<1. (...): Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:>>,

համաձայն ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 40-րդ կետի 4-րդ ենթակետի՝

<<40. Հայտերի բացման նիստում՝

4) հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում (...) գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը (...) ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:>>,

համաձայն սույն գնման ընթացակարգի հրավերի՝

5.3-րդ կետի. <<5.3 Եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է, ապա գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով (...):>>

7.2-րդ կետի. <<7.2 Հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով:

(...):

Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան::>>:

Վերը նշված նորմերից հետևում, եթե գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով մասնակցի ներկայացրած գնային առաջարկը չի համապատասխանում գնման ընթացակարգի հրավերի պահանջներին ապա մասնակցի հայտը գնահատող հանձնաժողովի կողմից ենթակա է մերժման:

Իսկ գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած գնային առաջարկը ըստ գնման ընթացակարգի հրավերի պահանջներին հարկավոր է ներկայացնել պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով, այսինքն՝ գնման առարկայի քանակ x մասնակցի առաջարկված գնման առարկայի միավորի գին: Հետևաբար եթե մասնակիցը իր ներկայացրած գնային առաջարկը կազմել և ներկայացրել է նշված բանաձևի խախտմամբ ապա այն գնահատող հանձնաժողովի կողմից պետք է գնահատվի անբավարար:

Այսինքն, եթե գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով մասնակիցը գնային առաջարկը ներկայացնի գնման առարկայի միավորի գնի համար, ապա գնահատող հանձնաժողովը այն պետք է գնահատի որպես գնման ընթացակարգի հրավերի պահանջներին չհամապատասխանող և մերժի:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն, որ <<ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ>> ՍՊԸ-ն 7-րդ չափաբաժնի մասով գնային առաջարկը ներկայացրել է գնման առարկա հանդիսացող ապրանքի մեկ միավորի համար, գանահատող հանձնաժողովը որոշեց՝ մերժել <<ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ>> ՍՊԸ-ի 7-րդ չափաբաժնի մասով ներկայացրած հայտը մերժել: Քանի որ 7-րդ չափաբաժնի մասով <<ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ>> ՍՊԸ-ի

ներկայացրած գնային առաջարկը չի համապատասխանում գնման ընթացակարգի հրավերի 5.3 կետի դրույթներին:

3.3 Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի է. պարբերության դրույթներով որոշեց՝ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա գնման ընթացակարգը 7-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած և նույն չափաբաժնի մասով Միկրորինգ ՍՊԸ-ի, Կոմպմարկետ ՍՊԸ-ի և Ինո-Թեքնոլոջի ՍՊԸ-ի ներկայացրած հայտերը մերժել, քանի որ բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են 7-րդ չափաբաժնի համար գնման հայտով սահմանված գինը:

3 Ընտրված Մասնակից ճանաչելու և անգործության ժամկետ սահմանելու մասին

3.1 Հաշվի առնելով գնահատող հանձնաժողովի առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ կայացրած որոշումը, մասնակիցների մասնակցության իրավունքին, որակավորման ու առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերի համապատասխանությանը հրավերի պահանջներին գնահատման թերթիկներով տրված գնահատականները, Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց՝

կողմ ***5 (հինգ),*** դեմ ***0 (զրո)*** ձայներով.

Գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել

1	«ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ին	2-րդ, 3-րդ, 4-րդ, 7-րդ, 11-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 17-րդ, 18-րդ, 26-րդ, 27-րդ, 30-րդ, 31-րդ, 49-րդ, 50-րդ, 51-րդ և 52-րդ չափաբաժինների մասով
2	«Կոմպմարկետ» ՍՊԸ-ին	5-րդ, 32-րդ և 54-րդ չափաբաժինների մասով
3	«ՕԱԶԻՍ ԿՈՄՊՅՈՒՏԵՐ» ՍՊԸ-ին	10-րդ չափաբաժնի մասով
4	«Ինո-Թեքնոլոջի» ՍՊԸ-ին	16-րդ չափաբաժնի մասով
5	«Նորմա-պլյուս» ՍՊԸ-ին	41-րդ չափաբաժնի մասով
6	ԱՁ «Արա Կարապետյան»-ին	8-րդ, 12-րդ, 37-րդ և 47-րդ չափաբաժինների մասով
7	«ԱՅ ԹԻ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ-ին	39-րդ և 43-րդ չափաբաժինների մասով
8	«Էմ Սի Էս Կովկաս» ՍՊԸ-ին	55-րդ և 56-րդ չափաբաժինների մասով
9	«Սիկնիտ» ՍՊԸ-ին	19-րդ, 20-րդ, 21-րդ և 22-րդ չափաբաժինների մասով

Գնումների մասին ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն սահմանել 5 օրացույցային օր անգործության ժամկետ

Ընդունել որոշում կողմ **5 *(հինգ),*** դեմ ***0 (զրո)*** ձայներով

գնահատող հանձնաժողովի նախագահ
/փոխտնօրեն/ Ա. Ջիլավյան
հանձնաժողովիանդամներ
/ինժեներական խմբի ղեկավար/ Պ. Նադիրյան

/գլխավոր հաշվապահ/ Շ. Անանյան

/անվտանգության ինժեներ/ Ս. Հայրապետյան

/հաշվապահ/ Ն. Դավթյան
Հանձնաժողովի քարտուղար՝
/գնումների համակարգող/ Արմեն Խաչատրյան